



ԳՈՐԾԱՐԱՐ
ՇԱՀԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՑԱՆՑ

ՓՄՁ զարգացման 2020-2024
թվականների ռազմավարության և
գործողությունների ծրագրի
վերաբերյալ

Դիրքորոշման արտահայտման փաստաթուղթ

Երևան 2019

Գործարար շահերի պաշտպանության ցանցը գործարարությանն աջակցող 14 կազմակերպությունների միավորում է, որի նպատակն է բարենպաստ գործարար միջավայրի ստեղծումը, երկրի գործարար համայնքի իրավունքների և շահերի պաշտպանության միջոցով: *Ցանցի նպատակներից է նաև գործարար հանրության ձայնը հասանելի դարձնել պետական մարմիններին, հանդես գալ որպես կապող կառույց՝ ավելի արդյունավետ իրականացնելու փոքր եւ միջին գործարարության ոլորտի իրենց շահառուների շահերի պաշտպանությունը:*

ՓՄՁ զարգացման 2020-2024 թվականների ռազմավարության վերաբերյալ

Ուսումնասիրելով ՓՄՁ զարգացման 2019-2024թթ. ռազմավարությունը՝ (<https://www.e-draft.am/projects/1986>), Գործարար շահերի պաշտպանության ցանցը (այսուհետ Ցանց) ընդհանուր առմամբ իր գոհունակությունն է հայտնում կապված ռազմավարությունում առկա դրույթների հետ: Ամփոփելով բուն ռազմավարությունը, որպես ընդհանրական եզրահանգում կարող ենք նշել, որ փաստաթղթում **առևտրաարդյունաբերական պալատների և բիզնես ասոցիացիաների հետ համագործակցության մասին քիչ է հիշատակվում**: ՓՄՁ զարգացման ռազմավարության մեջ **չկան նաև գործարարությանն աջակցող կառույցների կարողությունների զարգացման մասին դրույթներ**: Ստորև կներկայացվի ռազմավարությունում առկա խնդիրները և առաջարկությունները այդ խնդիրների լուծման վերաբերյալ, ըստ ռազմավարության և դրանց կից գործողությունների ծրագրի: Այսպիսով՝

1. 2.1 նպատակները և թիրախները բաժնում նշված է՝ «ռազմավարության գործողության ավարտին ՓՄՁ-ում ստեղծվելու է 39 հազար նոր աշխատատեղ»:

Առաջարկ՝ Տվյալ քանակական ցուցանիշի արժանահավաստության համար առաջարկվում է հղում կատարել տվյալ ցուցանիշի հաշվարկներին: Բացի դա, համեմատականներ անցկացնելու համար ցանկալի կլիներ նաև նշել ՓՄՁ-ում առկա ներկայիս աշխատատեղերի քանակը:

2. 3-րդ գլխի 3.1՝ ֆինանսական ռեսուրսների հասանելիության ավելացում բաժնում նշված է՝ «ըստ «ՓՄՁ ֆինանսական ֆորում» կենտրոնի տվյալների՝ Հայաստանում ՓՄՁ ֆինանսական միջոցների բացը ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է 10.84%»:

Առաջարկ՝ Նշված ցուցանիշը մեկնաբանման կարիք ունի, քանի որ պարզ չէ, թե ինչ ասել է «ՓՄՁ ֆինանսական միջոցների բաց ՀՆԱ-ի նկատմամբ»: Հարկ են համարում նշել նաև, որ տվյալ պարբերության վերջում նշված հղումով ցուցանիշը գտնել հնարավոր չեղավ:

3. Նույն գլխի՝ 3.1 բաժնում որպես առաջնահերթ գործողություն նշված է՝ «ՓՄՁ Պետական աջակցության գործիքակազմի արդյունավետության և ծածկույթի ընդլայնում»:

Առաջարկ՝ Ի լրումն առաջնահերթ գործողություն 1-ի կարծում ենք արդյունավետ կլինի նաև պետության և բանկերի համագործակցության արդյունքում ՓՄՁ-ներին տրամադրել ցածր տոկոսադրույքով վարկեր, որոնք կունենան հետաձգված մարումների հնարավորություն: Տվյալ դեպքում Պետությունը կսուբսիդավորի վարկի տոկոսները (նվազագույնը 1 տարով), որը հնարավորություն կտա արտադրական պրոցեսում ներգրավված ՓՄՁ-ներին տնօրինելու ստացված գումարը:

4. Նույն գլխի 3.1 բաժնի մասով առաջնահերթ գործողություն 3-ում նշված է՝ «ֆինանսական գրագիտության բարձրացում և թափանցիկ գործարարության

մշակույթի զարգացում»: Գործողություն մեկնաբանման մեջ նշված է «կառավարությունը դիտարկելու է ՏՏ լուծումների օգտագործման խրախուսման հնարավորությունները և իրականացնելու է համապատասխան կրթական ծրագրեր»:

Առաջարկ՝ Տվյալ դեպքում լրացուցիչ մեկնաբանման կարիք ունի թե՛ ի՞նչ ՏՏ լուծումների կամ ի՞նչ դասընթացների մասին է խոսքը: Արդյո՞ք տվյալ դեպքում խոսքը գնում է հաշվապահական ծրագրերի թե՞ այլ ծագրերի մասին:

- 5.** Նույն գլխի 3.1 բաժնի մասով Թափանցիկ գործունեություն վարելու համատեքստում Ցանցը կարևորում է նաև կոռուպցիայի դեմ պայքարում բիզնեսի ներգրավվածությունը և համատեղ գործողությունները: Ներկայումս կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում միջազգային պրակտիկայում ընդունված է կիրառել հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրերի ներդրման համակարգը: Որոշ երկրներում նման ծրագրերի ընդունումը խոշոր ընկերությունների համար պարտադիր է: Նման երկրներում, որտեղ խոշոր ընկերությունները ընդունում են հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրեր լոկոմոտիվի դեր են կատարում և հետևից տանում են նաև ՓՄՁ-ներին, այն պարզ պատճառով, որ ըստ վերոնշյալ ծրագրի տվյալ ընկերության հետ աշխատող ՓՄՁ-ները (երրորդ կողմեր) նույնպես պետք է համապատասխանեն հակակոռուպցիոն ընթացակարգերին: Նման ծրագրերի ընդունումը բավականին ծախսատար ընթացակարգեր է ենթադրում, բայց հաշվի առնելով ծրագրի տված առավելությունները այդ ծախսերը միանշանակ արդարացված են:

Առաջարկ՝ իրականացնել տեղեկատվական միջոցառումներ և քարոզչական արշավներ համապատասխանության ծրագրերի ներդրման և արդյունավետության մասին: ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը ունի բավարար փորձ և հմտություններ տվյալ ոլորտում և արդեն իսկ ներդրել է հակակոռուպցիոն համապատասխանության ընթացակարգեր: Պալատի կողմից մշակվել է «Գործարար էթիկայի և հակակոռուպցիոն ուղեցույց ձեռնարկությունների համար» և դրան կից «Հակակոռուպցիոն կանոնակարգի օրինակելի ձև» որոնք տեղադրված են Պալատի կայքում: Պալատը իր պատրաստակամությունն է հայտնում աջակցել ՓՄՁ-ներին ծրագրի ներդրման ողջ ընթացքում:

- 6.** 3.2 ՓՄՁ սուբյեկտների կարողությունների զարգացում և ձեռնարկատիրական մշակույթի խթանում բաժնի առաջնահերթ գործողություն 3-ում նշված է «Ձեռնարկատերերի և ՓՄՁ-ում զբաղվածների որակավորման բարձրացմանն ուղղված միջավայրի կայացում», իսկ մեկնաբանություն մեջ կարևորվում է ՄԿՈԻ կրթական ծրագրերի և դասընթացների մշակումը գործարար միջավայրի ներկայացուցիչների հետ:

Առաջարկ՝ Այստեղ առաջարկվում է անդրադարձ կատարել դուրս կրթական համակարգի զարգացմանն ու կատարելագործմանը, ինչը միջազգային

պրակտիկայում լայն տարածում ունի: Առևտրաարդյունաբերական պալատները և բիզնեսի շահերը ներկայացնող կառույցներն ամբողջ աշխարհում մեծ դերակատարում ունեն դուրս կրթական համակարգի կայացման գործում:

- 7. 3.3** ՓՄՁ սուբյեկտների համար շուկաների հասանելիության ապահովում գլխում որպես առաջնային գործողություն 4 նշված է՝ «Լոգիստիկ/պահեստային տնտեսությունների կայացում» իսկ մեկնաբանման մեջ մասնավորապես ասվում է՝ «կառավարությունը մտադիր է մշակել գործիքակազմ, որը կաջակցի ՀՀ-ում ՓՄՁ-ներին լոգիստիկ, պահեստային և այլ հարակից ծառայություններ մատուցող լոգիստիկ/արտահանման կենտրոնների կայացմանը»

Առաջարկ՝ Անհրաժեշտ է հստակեցնել հետևյալ հարցերը՝ ինչպե՞ս և ի՞նչ մեթոդներով է իրականացվելու լոգիստիկ կենտրոնների կայացումը, և թե ի՞նչ տեղակայում են ունենալու այդ կենտրոնները:

- 8. 3.3** բաժնի 7-րդ առաջնային գործողության մեջ ասվում է՝ «նպաստել ՓՄՁ-ների ինտեգրմանը խոշոր ձեռնարկությունների արժեքի շղթայում» իսկ մեկնաբանության մեջ նշվում է «կառավարությունը նպատակ ունի կապող օղակ հանդիսանալ ձեռնարկությունների, արտահանողների և տեղական ՓՄՁ-ների համագործակցության կայացման համար»

Առաջարկ՝ Մեր կարծիքով նշված սուբյեկտների միջև կապող օղակ հանդիսանալը առավել շատ համապատասխանում է բիզնեսի շահերը ներկայացնող կառույցների՝ օրինակ առևտրաարդյունաբերական պալատների գործառույթներին: Այս պարագայում կառավարության խնդիրը պետք է լինի ինստիտուցիոնալ աջակցություն ցուցաբերել վերոնշյալ կառույցներին և ստեղծել արդյունավետ հարթակներ հետագա համագործակցության համար:

- 9. 3.4** ՓՄՁ զարգացման համար ինստիտուցիոնալ և իրավական բարենպաստ միջավայրի ապահովում գլխում որպես առաջնաին գործողություն 1 նշվում է «մասնավոր-պետություն երկխոսության մեխանիզմների կայացում և կիրառությունը», իսկ մեկնաբանության մեջ նշվում է՝ «Այս գործողության իրականացման ճանապարհին կարևորվում է բիզնես անդամակցության վրա հիմնված կազմակերպությունների դերի բարձրացումը»:

Առաջարկ՝ Ցանցը իր գոհունակությունն է հայտնում, որ այս բաժնում որոշակի անդրադարձ է կատարվել բիզնեսի շահերը ներկայացնող կառույցներին: Այնուամենայնիվ այս միակ հիշատակման մեջ սահմանված չէ թե ինչպե՞ս և ի՞նչ գործիքակազմով է ակնկալվում բարձրացնել բիզնես անդամակցության վրա հիմնված կազմակերպությունների դերը:

Այդ կապակցությամբ առաջարկում ենք այս բաժնում հստակ և հասցեական գործողություններ ներառել:

ՓՄՁ զարգացման 2020-2024 թվականների ռազմավարության գործողությունների ծրագրի վերաբերյալ

Ցանցը բացի ՓՄՁ զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունից դիտարկել է նաև ռազմավարությանը կից գործողությունների ծրագիրը: Այստեղ ևս կան որոշակի առաջարկություններ և դիտողություններ որոնք ներկայացնում ենք ստորև

1. 1.3.4 կետում նշված է՝ «ՓՄՁ շրջանում պատասխանատու թափանցիկ բիզնեսի կազմակերպման և կորպորատիվ կառավարման սկզբունքների կիրառման խրախուսման քաղաքականության մշակում՝ ներառյալ իրազեկումը»
Առաջարկ՝ այս հարցի առնչությամբ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը պատրաստ է աջակցություն ցուցաբերել և կիսվել ոլորտում արդեն իսկ կուտակված իր փորձառությամբ: Հարկ ենք համարում նշել նաև, որ բացի 5-րդ կետում հիշատակված Ուղեցույցից և Օրինակելի ձևից վերջերս ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը ընդունել է նաև Էթիկայի և հակակոռուպցիոն վարվելակարգի կանոններ:
2. 2.1.5-2.1.7 կետերը վերաբերում են ՓՄՁ սուբյեկտներում նորարական և կապի տեխնոլոգիաների կիրառման խրախուսման ծրագրերի մշակմանն ու իրականացմանը: Անդրադարձ է կատարվում նաև «կանաչ» տեխնոլոգիաների կիրառման աջակցության առկա գործիքակազմի քարտեզագրմանը:
Առաջարկ՝ Վերոնշյալ կետերում առաջարկվում է ձևակերպել, թե որո՞նք են նորարարական և կապի տեխնոլոգիաների այն ծրագրերը, որոնք արդեն իսկ մշակվել են ըստ գործողությունների պլանի տրամաբանության, հիմնավորել շահառուների քանակը (ինչու՞ 200), ներկայացնել թե ի՞նչ է նշանակում «Կանաչ» տեխնոլոգիաների կիրառման աջակցության առկա գործիքակազմի քարտեզագրում, ո՞րն է դրա նպատակը և ի՞նչ կիրառելիություն կունենա: Այս բոլոր հարցերի պատասխանները ավելի ամբողջական կդարձնեն նշված դրույթների բովանդակությունը:
3. 2.2.1 կետում՝ «ներդնել Բիզնես Աջակցության ծառայություններ մատուցող կազմակերպությունների և Բիզնես ասոցիացիաների հետ համագործակցության պլատֆորմ, ներառյալ որակի հսկողություն մեխանիզմներ» և 2.2.2 կետը՝ «դասընթացավարների վերապատրաստում միջազգային փորձագետների կողմից»
Առաջարկ՝ Սույն ենթակետերը քննարկման կարիք ունեն բիզնեսի շահերը ներկայացնող մի շարք կառույցների՝ ներառյալ առևտրաարդյունաբերական պալատների հետ: Հստակեցման կարիք ունի նաև թե ո՞ր կառույցներին են վերաբերում վերոնշյալ դրույթների բովանդակությունը՝ խորհրդատվական ընկերությունների՞ն թե՞ բիզնեսին աջակցող կազմակերպություններին:

4. 2.3.1 և 2.3.4 կետերում համապատասխանաբար նշված են՝ «Ձեռնարկատիրական հմտությունների կրթական ծրագրի մշակում» և «ՄԿՈԻ կրթական ծրագրերի մշակման գործընթացում մասնավոր հատվածի հետ քննարկումների կազմակերպում»
- Առաջարկ՝** 2.3.1-ի մասով նշված գործողությունը արդեն իսկ ներառված է մի շարք կրթական ծրագրերում, ինչպես բարձրագույն այնպես էլ միջին մասնագիտական կրթական հաստատություններում, իսկ 2.3.4 կետում նշվածը արդեն իսկ կայացած փաստ է՝ հաշվի առնելով համագործակցությունը օրինակ առևտրաարդյունաբերական պալատների հետ
5. 2.3.8 կետում նշված է՝ «մշակել արտադրական տարբեր ոլորտների համար մատչելի գործարար ուղեցույցեր և մոդելներ դրանք հասանելի դարձնել օնլայն տիրույթում»
- Առաջարկ՝** Այս կետի ցուցանիշում նշված է ուղեցույցերի քանակ, իսկ թիրախում՝ 20 հատ: Այստեղ նախքան ուղեցույցերի մշակմանն անցելը նախ և առաջ առաջարկում ենք քարտեզագրել եղած ուղեցույցերը, որպեսզի հետագայում կազմվող ուղեցույցերը լինեն առավել օգտակար և չկրկնել նախկինում եղածների բովանդակությունը: Բացի այդ որպես թիրախ նշված 20 ուղեցույցների վերնագրերի կամ ակնկալվող բովանդակության նախնական տարբերակների մասին տեղեկատվություն ներառել ռազմավարական նախագծում և/կամ գործողությունների պլանում:
6. 2.5.3 կետում նշված է՝ «դպրոցականների և ուսանողական ճամբարների անցկացում
- Առաջարկ՝** Այս կետի ազդեցություն ՓՄՁ զարգացման քաղաքականության վրա լրացուցիչ հիմնավորման կարիք ունի:
7. 3.1.3 կետում նշվում է՝ «Արտահանման առավել մեծ ներուժ ունեցող ոլորտների ՓՄՁ-ի հետ իրականացնել իրազեկման թիրախային և ավելի մանրակրկիտ աշխատանքներ»
- Առաջարկ՝** տվյալ դեպքում ձևակերպումները հստակ չեն և չեն ենթադրում կոնկրետ գործողություններ և այդ գործողություններից բխող կենկրետ արդյունքներ, ուստի առաջարկում ենք հանել տվյալ կետը:
8. 3.1.4 կետում նշված է՝ «Որակի հավաստագրերի տրամադրման գործընթացի վերլուծություն և արդյունքների հիման վրա բարեփոխումների իրականացում միտված գործընթացի պարզեցմանը»
- Առաջարկ՝** նշված կետի փոխարեն ավելի նպատակահարմար կլինի պոտենցիալ ունեցող ընկերությունների համար նպաստել և աջակցություն ցուցաբերել որակի հավաստագրերի ստացման հարցում:
9. 3.1.5 կետում նշված է՝ «Իրականացնել թիրախային շուկաներում ընտրված ապանքների/ծառայությունների պահանջարկի վերլուծություններ և ապահովել

դրանցում տեղ գտած բիզնես հնարավորությունների ներկայացումը ՓՄՁ համայնքին»

Առաջարկ՝ այստեղ նշված չէ վերլուծություն իրականացնող մարմնի, ծավալների և ոլորտների մասին տեղեկատվություն: Նպատակահարմար կլինի ընտրել թիրախային ոլորտներ ըստ նպատակահարմարության, և յուրաքանչյուր ոլորտի համար իրականացնել համապատասխան վերլուծություններ անհրաժեշտ ծավալով և որակով՝ ներգրավելով մասնագիտական և փորձագիտական խմբերի և կառույցների:

10. 3.2.2 նշված է՝ «Միջազգային առևտրային հարթակներում ՓՄՁ-ների ներկայացվածության տեխնիկական աջակցություն»

Առաջարկ՝ այստեղ պարզաբանում է անհրաժեշտ, թե արդյո՞ք միջազգային առևտրային հարթակներ ասելով հասկանում ենք էլեկտրոնային առևտրի հարթակները թե այլ հարթակներ:

11. 3.2.3 նշված է «Առավել նպատակահարմար միջազգային ցուցահանդեսների օրացույցի մշակում»

Առաջարկ՝ Ավելացնել ինչպե՞ս և որ գերատեսչություններն են որոշելու միջազգային ցուցահանդեսի նպատակահարմարությունը: Ցանցն առաջարկում է այդ ընտրությունը կատարել հանձնաժողովի միջոցով, որտեղ ներգրավված կլինեն տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ (պետական և մասնավոր):

12. 3.2.4 նշված է՝ «Ֆինանսական աջակցություն տրամադրել ՓՄՁ աջակցություն իրականացնող կառույցների կողմից ներգնա և արտագնա առևտրային առաքելությունների իրականացմանը, ցուցահանդեսների կազմակերպման և մասնակցության ապահովմանը»

Առաջարկ՝ գործողությունը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում երբ ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացը իրականացվի մրցութային կարգով (տենդերի միջոցով) և որին հնարավորություն կունենան մասնակցելու նաև ոչ պետական կազմակերպությունները (որպես նախնական պայման նշելով, որ դիմող կազմակերպությունները պետք է ունենան համապատասխան փորձ):

13. 3.3.1-3.3.3 կետերի բովանդակությունը ընդհանուր առմամբ կրկնում է նախկինում նշված կետերի բովանդակությունը

14. 3.4.2 կետում նշված է՝ «Լոգիստիկ կենտրոնների հիմնում»

Առաջարկ՝ լոգիստիկ կենտրոնի հիմնումը ըստ Ցանցի դեռևս պետք է քննարկումների փուլ անցնի բոլոր շահառուների շրջանակներում:

15. 3.3 կետում նշված է՝ «Թիրախային շուկաների պահանջների համապատասխանեցման գործընթացի տեխնիկական աջակցություն»

Առաջարկ՝ այստեղ պետք է ներառել նաև թրեյնինգների կազմակերպումը ԵԱՏՄ, ԵՄ և այլ շուկաներ դուրս գալու մասով: Կարելի է կիրառել նաև միջազգային

պրակտիկայում հայտնի մեկ այլ մեխանիզմ. այն է՝ որոշակի ընտրված ընկերությունների համար մարկետինգային պլանների կազմում (3-5 էջ), որտեղ հստակ առաջարկներ լինեն, թե տվյալ ապրանքը կամ ծառայությունը ո՞ր շուկաներում մրցունակ կլինի և ինչպե՞ս վաճառել հնարավոր առավելագույն ծավալների հասնելու համար:

16. 3.5.3 կետում նշված է՝ «Գործարկել ծագման հավաստագրի էլեկտրոնային համակարգ, որտեղ հնարավոր է լինելու առցանց դիմել հավաստագրի համար և ստանալ այն մեկօրյա ժամկետում»

Առաջարկ՝ ծագման հավաստագրերի էլեկտրոնային համակարգի փորձնական գործարկումը իրականացվում է առևտրաարդյունաբերական պալատի և ՎՋԵԲ-ի համագործակցության արդյունքում, ուստի առաջարկում ենք հանել այս ենթակետը: Փոխարենը պետությունը կարող է աջակցել ՓՄՁ-ներին REX համակարգից օգտվելու հետ կապված հարցերում:

17. 4.2.6 կետում ներկայացված է՝ «ՓՄՁ աջակցություն իրականացնող մասնավոր նախաձեռնությունների քարտեզագրում և պետական աջակցության իրականացում տեղեկատվության տարածման, վերլուծական նյութերի տրամադրման և այլ գործիքների միջոցով»

Առաջարկ՝ քարտեզագրման պրոցեսը ըստ էության անընդհատ պրոցես է և նպատակահարմար չէ նման նախաձեռնությունների մեկանգամյա քարտեզագրումը: Առաջարկում ենք հանել սույն ենթակետը կամ վերաձևակերպել:

18. 4.2.9 կետում նշվում է՝ «Իրականացնել ՓՄՁ աջակցության ծրագրեր իրականացնող մարզային կառույցների կարողությունների գնահատում և դրա հիման վրա կազմակերպել անհրաժեշտ դասընթացներ»

Առաջարկ՝ ՓՄՁ աջակցություն իրականացնող մարզային կառույցների կարողությունների գնահատումը և անհրաժեշտ դասընթացների կազմակերպումը պետք է իրականացնել ինստիտուցիոնալ հիմքերի վրա և դասընթացները համապատասխանեցնել տեղական կազմակերպությունների կարիքներին:

19. 4.5 «ՓՄՁ ազդեցության գնահատման մեխանիզմների մշակում և գործադրում»

Առաջարկ՝ Այս մասի գործողությունները պետք է իրականացվեն պետություն-մասնավոր հատված համագործակցության միջոցով, որպեսզի ստացվող արդյունքն օբյեկտիվ ստացվի: Ուստի առաջարկում ենք տվյալ գլուխը վերաձևակերպել «ՓՄՁ ազդեցության գնահատման մեխանիզմների մշակում և գործադրում մասնավոր հատվածի շահերը ներկայացնող կառույցների ներգրավմամբ» վերտառությամբ:

20. 4.6 «Հարկային/մաքսային/այլ վարչարարական բեռի գնահատում և պարզեցում ՓՄՁ-ների համար»

Առաջարկ՝ նշված գործողությունը պետք է հաշվի առնի բիզնեսի շահերը ներկայացնող կառույցների՝ մասնավորապես առևտրաարդյունաբերական

պալատների կարծիքը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պալատն ամենօրյա շփումների մեջ է բիզնեսների ներկայացուցիչների հետ, ուստի այտեղ ևս ակտուալ է տվյալ գլխի վերնագիրը վերաձևակերպել «Հարկային/մաքսային/այլ վարչարարական բեռի գնահատում և պարզեցում ՓՄՁ-ների համար, մասնավոր հատվածի շահերը ներկայացնող կառույցների ներգրավմամբ» վերտառությամբ: